

	Էջ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ	
Հ. Մ. ձ. - Աղնկալու թիւներ	1
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ	
Յ. ՔԻՒՐՏԵԱՆ. - Բոլնոյ զրջագրական և մանրա- նկարչական դպրոցը (շար.)	10
ԳՐԱԿԱՆ	
Հ. Մ. ձԱՆԱՇԵԱՆ. - Փօլ Վալերի և իր բանա- ստեղծութիւնը (շար.)	4
ԱՐՄԱՆԻՐԵԱՆ. - Վերադարձ	9
Հ. Վ. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ. - Գու մի կարգար	9
» » - Գիւղին հովիկը - Անիի կաթողիկէն - Շողի մը կեանքն ունեցար. 24-29	
ՅԱԿՈՐ ԳՈՒՅՈՒՄՏԵԱՆ. - Փորձութիւն	34
» » - Գիտակցարար	36
ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ. - Առանց խորագրի	39
ՊԱՏՄԱԿԱՆ	
ՆՈՒՊԱՐ ՄԱԳՍՈՒՏԵԱՆ. - Արտաւազ Գ. և հոս- մէկան գաւաճանութիւնները	14
Հ. Ա. ՅՈՎՈՒՆԵԱՆ. - Ապետի Կոմիտէի գործունակ- կեանքը (թրգմ. հունգարերէնէ)	18
ԳԻՏԱԿԱՆ	
ՅԱ. - Թիւրք Պրահէ	35
ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ	
Հ. Յ. Բ. - Պատերազմի ատեն գրատուններու կոր- ծանումը	30
Հ. Յ. Բ. - Հերի Մորկենթաու	33
ԽՄԲ. - Հայ արձանագործ Տիկ. Նուարդ Զար- եան	37
ԳՐԱԽՕՍԱԿԱՆ	
Հ. Վ. Յ. - Հանդէս հանդիսից. «Հայրենիք» ամ- սագիր 1946-ի	41
ՀՐԱՉ ԲԱՉԱՐԵՆՅ. - Ունէ Քէլը, պատկերասաղ և հայ հանճարներ	45
Յ. ՔԻՒՐՏԵԱՆ. - Ժիւրժի Պալլադիոսի «E- tudes sur L'Art Médiéval en Géorgie et en Arménie» գրքի մասին	46
ՄԱՀԱԳՐԱԿԱՆ	
*** - Հանգիստ հոգւոյ Մայր Թեոփիլ Գալանիանի (Անարատ Գալանի Միաբանութիւնէն)	47

	PAG.
ARTICLE DE FOND	
P. M. Dj. - Espérances !	1
PHILOLOGIE	
H. Kurdian. - L'école des Manuscrits et de la Miniature à Polentz	10
LITTÉRATURE	
P. M. Djanachian. - Paul Valéry et sa poésie (suite)	4
Armavirian. - Retour (poésie)	9
P. V. Horhannessian. - Ne dites pas (poésie)	9
» » - Le vent de la cam- pagne - La Cathédrale d'Ani - Tu as eu la vie d'un rayon - Un songe (poésie)	24-29
Hagop Kouyoumdjian. - Tentation	34
» » - Consciement	36
Arsène-Yergath - Sans titre	39
HISTOIRE	
Noubar Maroudian. - Ardavast III et les intrigues romaines	14
P. A. Fogolyan. - La vie merveilleuse du comte Abédik (trad. de Phongrois)	18
SCIENCE	
P. A. - Tycho Brahé	35
DIVERS	
P. H. P. - La destruction des bibliothèques pendant la guerre	30
P. H. P. - Henry Morgentauw	33
Réd. - M.me Nevart Zarian, sculpteur	37
RECENSIONS	
P. V. H. - Revue des Revues: «Haïrénik» de 1946 (ed. Boston)	41
Hratch Katcharentz. - René Clair, cinéma et les génies arméniens	45
H. Kurdian. - «Etudes sur l'Art Médiéval en Géorgie et en Arménie» par Jurgis Baltrusaitis, (ed. 1929, Paris)	46
NECROLOGIE	
*** - † Mère Thérèse Hovnanian (de la Congr. de l'Imm. Conception)	47



Բ Ա Չ Մ Ա Վ Է Պ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ

1843 - 1947
105-րդ Տ Ա Ր Ի



ՅՈՒՆՈՒԱՐ - ՓԵՏՐՈՒԱՐ
ԹԻՒ 1-2

ՄԱԿՆ ԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեր կէս տարիէն աւելի անցած է այն օրէն երբ կը դարձնէր զէնքերու շաշխեր և կրակն ու յոյժը պատերազմի ճակատներուն վրայ:

Մարդկութիւնը այն օրէն ի վեր երջանիկ ակնկալութիւններու օրեր սպրեցաւ և առկա- շին կ'սպրի... Աշխարհ, երկրորդ օրն իսկ անմարդկային աշխի դարձաւ իսկ, իսկա- զարօրէն փարեցաւ կեանքին, և իւրաքան- չիւր սգո փութաց կանոնադրել իր քաղա- քացիական բնականոն կեանքը. յայց պէտ- քերը այնքան շատ էին, որ գտնական պահանջներ տեղի տուն անհրաժեշտ պա- կանքները ճախ յրացներու: Գիրն ու գրական- նութիւնը շուրջաւ փութով կազմակերպուե- լաւ և ինչ գարնանայի կենտրոնակութիւն, հայկական գաղութները՝ կարծես օրինակ հանդիսանալու ճախանձախնդիր փութիւ- տութեամբ՝ հրապարակ իշան սրտադրելու բերքեր, օրացիրներ, և այսօր արդէն մարդ կը դժուարի անոնց համբաւներն ընելու: Ան- շուրջ այս կենտրոնակութիւնը և բերքուն- քիւնը մեր քունին ու արմէքին յարաբերու- րեամբ կ'աւելի է:

Հորիզոնը սակայն մուշտ է, ակնկալու- րիւնները գոնացում չեն, խաղաղութեան դաշնագիրները խորհրդաւոր դաւադրութեամբ ստաշ կ'երթան և չեն պահեր տրուած խոս- տումները, Չորս Մեծերու յարաբերութիւն- ները ակնկեղծութեան պակաս ունին, չեն յարգուիր ժողովուրդներու արդար իրա- տեքները. և այս բոլորը կը ձիւթին կարծես պատրաստելու ճորտնոր անլուծելի հանգոյց- ներ Եւրոպայի քաղաքական կեանքին մէջ... Անս թէ ինչու կ'ուշանայ իսկական խա- դարութիւնը:

Խաղաղութիւն և Ազատութիւն, երկու հիմնական շիտանքը մարդկային կեանքին, մին միւսով ապահովուած, կեանքի երկու բերքեր, որուն երէ խաղաղութիւնը ձախն է, Ազատութիւնը աշն է անտարակոյս: Այսօր չենք կրնար ըսել թէ չկայ խաղաղութիւն

(վասն զի դադրած է պատերազմը) բայց կրնանք ըսել թէ չկայ Ազատութիւն:

Ազատութիւնը իր գլխաւոր խնամարտին մէջ կը նշանակէ ըլլալ տէր ինքնիր ուժերուն և կարողութիւններուն, կարենալ համաձայնեցնել գործը մտքի լոյսին՝ որ կառավարել է հոգեկան բոլոր գործունէութեան, կարենալ խօսիլ ու դատել ըստ իր մտքի տեսութեան և ապրիլ համաձայն խղճի ձայնին. ահա ինչ որ կը կազմէ ճշմարիտ ազատութեան էութիւնը: Ազատութիւնը մարդկային հոգւոյն ամէնէն մեծ յատկութիւնն է, որ միանգամայն գերազանցօրէն կ'ազնուացնէ զայն: Դարերու կեանքին մէջ, միշտ և ամենուրեք, մարդիկ պայքարած են անոր համար և գոհած իրենց գոյութիւնն իսկ՝ չկորսնցնելու համար զայն: Քաղաքակրթութեան Ազգերու Կառավարական անձերու ստաշին կարևոր հոգը, հետևաբար, պէտք է ըլլայ (քանի որ իրենց հպատակները բանական էակներ են և ոչ թէ զազաններ կամ մեքենաներ) ընդհանուր ազատութեան ապահովութիւնը: Ստրկացնելու ճիգը բռնաւորներու մէջ, ապացուցած է պատմութիւնը, որ անգրգաւելի ընդվզումներու դուռ կը բանայ և կը պատրաստէ յեղափոխութիւններ, որոնք հոսկ Վարիցներու անկումով և մահով կը վերջանան: Կեանքին ամէնէն գեղեցիկ և սիրելի կողմը արդէն անձնային անհատական է. աղքատ, կարօտ վիճակի մէջ անգամ տուայտողը՝ իր ազատութիւնը կը փնտռէ ունենալ ամէն բանէ առաջ: Այդ է միանգամայն գլխաւոր պայմանը ժողովուրդներու յատկապէս կարողութիւններու, բարոյական և իմացական կարողութիւններու բեղմնաւոր ծաւալումին և զարգացումին: Ազատութեամբ է դարձնալ որ մարդկային եւր գիտակցութիւնը կ'ունենայ իր անձին արժանապատւութեան, մինչ արկութեամբ կը ցածնայ՝ դառնալով ենթակայ ախտերու, կրքի և ստեղծութեան:

Այդ ուր է այսօր այս ցանկալի ազատութիւնը, որուն համար բռնկեցաւ աշխարհը երբեք, որուն համար այնքան գեղեցիկ ու

խոստովանալից երիտասարդներու ծաղիկ հասակը մոխրացաւ:

Ինչ յոյսեր, ինչ ակնկալութիւններ կը սնուցուէին ստուգիւ յետ գեղերու դադարին, մինչ այսօր կատարեալ յուսախաբանութեան մը առջև կը գտնուէին: Ժողովուրդներ կը շարունակէին տառապիլ իրենց կորստութեամբ սահմաններուն մէջ, կեանքի անհամեմատ արտերանք և տեղ տեղ եղբիւրկ տարապայման անտառադութեամբ: Եւ ինչ է կատարութեամբ դարձան՝ ստաշը ստեղծու համար այս աշխարհը վիճակին. — լոյս ցարտ անտարբերութիւնն է յաճախ որ կը պատահանէ մարդկային սրտին ողորմ կոչերուն: Մինչև որ ետախորտիւնը տեղ չտայ քրիստոնէական սիրոյ տարածելու իր բեռերը բշտաւորութեան վրայ, մինչև որ արդարութեան ճշմարիտ գաղափարը հիմը չըլլայ բոլոր բանակցութիւններուն՝ ազդելով ժողովի նիստերուն վրայ իր ուղիղ և վարիչ սկզբունք, երբեք աշխարհ պիտի չունենայ իր կատարեալ ազատութիւնը խօսքի, ազատութիւն ստուտորի, ազատութիւն սահմաններու:

Կը խօսուի ստեղծ վերաշինութեանց մասին... Ախրանտես ենք նորոգումներու, հիմէն կառուցումներու պատերազմին պատճառած անտրամաբան քանդումներուն: Յաղթական ու պարտեալ՝ ունին հաւասարապէս նորոգելիքներ, բուժելիք վերքեր: Զի խօսուի սակայն, կամ շատ քիչ կը խօսուի մարդկութեան բարոյականին վերաշինութեան մասին. աւելի ճշգրիտ պիտի ըլլար, եթէ ըսէի, մարդկային ընկերութեան հոգին վերջապէս կրթելու, ազնուացնելու, քրիստոնէական բարոյականի սկզբունքներուն վրայ հաստատելու ամէնէն կենսական հարցին շուրջ: Եթէ այս վերջին կէտը չապահովուի՝ մարդիկ շատ դիւրաւ կրնան կրկին զազանանալ իրարու դէմ և կատարութեամբ աւերումներուն կրկնապատիկը պատճառել:

Այս տեսակետով ալ դարձեալ ակնկալութեան մէջ կ'ապրինք. կը կարծենք և կը սիրենք հաւատալ որ Ազգերու Վարիցները

հոսկ պիտի ունենան իմաստուն խոնակաւորիւն և կամքի վճռականութիւն՝ հարկ եղածին պէս կազմակերպելու իրենց ժողովուրդները: Թերեւս ընդունայն տեղ կը սնուցանենք այս ակնկալութիւնը. սակայն մեզի դիտողներուս համար՝ ստիկա միակ սիրտիարար ապրումն է: Ինչ որ աշխարհի այս ընդհանուր կացութիւնը խկապէս կը մտայնուէ՝ գաղափարի պայքարն է, արդիւնք զանազան փիլիսոփայութեանց՝ մոլեգին շանքերով տիրապետելու մին միւսին վրայ. որոնց իրաքանկիւրիսն ալ համակիրները կը մղեն ամէնէն բուն, տակաւին անարիւն ու լուռ պայքարը: Մարդկութիւնը գուցէ, ոչ մէկ ժամանակի մէջ, այնքան բաժնուած և կեղեքուած է այլեւայլ գաղափարաբանական հոսանքներէ, որքան ներկայիս: Ասկէ առաջ կու գայ բնական հետեւանքով հաւաք միեւնոյն ազգի ծոցին մէջ (խօսքը եւրոպական պետութեանց մասին է) երկփեղկումը մտքերու՝ զանազան կուսակցութիւններով, որոնք հարկ է ըսել, կը շրտեն անգլերու կորովը՝ վնասելով միութեան:

Դէպի ուր կ'ընթանայ մարդկութիւնը այս ճամբով. — պիտի ըսենք դէպի անձանօրին անբուժելիք:

Նոր տարին պիտի բերէ՝ արդեօք նոր յոյս, գիտակցութիւն. լսելի պիտի ըլլայ արդեօք խղճի և բանականութեան անկեղծ ձայնը. — Մենք կը մարդենք զայն, և կը յուսանք որ պիտի լուշանայ ճշմարիտ վերանորոգումը մարդկային բնութեան, եւրոպայական համերաշխ գործունէութեամբ ժողովուրդներու միջև:

* * *

Նոր տարոյ սնունդ կոխած ստեղծելի՝ երբ այս խորհրդածութիւնները կը զգանք հոս ընել՝ մտքերին կ'երբայ խկոյն մեր փոքրիկ ու ցանկալի Հայաստանին, ու բնականօրէն կը հարցնենք թէ ինչ պիտի ըլլան հաւանքներ ակնկալութիւնները նկատմամբ ազգային վերանորոգումին և վերելքին ա-

ռաշիկայ տարոյն մէջ: Անշուշտ մենք ալ ունեցանք վերքեր, սակայն պատմութեան մէջ աննախընթաց երևոյթ՝ ընդհանուր պատերազմի աղէտէն նուազագոյն վնասով և մանաւանդ թէ յաղթական դուրս ելանք կոտորով Սով. Հանրապետութեանց կոխքին: Փոքրիկ Հայաստանը բերաւ իր մասնակցութիւնը, շանեցաւ զինուորական փառքեր, իր քաջարի զաւակները դիմազաններու կարգը դատեցան՝ արժանանալով պաշտօնական դրուատիքներու և շքանշաններու: Զէնքերու դադարի վաղորդայնին՝ ապացոյցը սկսաւ տալ իր մշակութային կեանքի բեղուն աշխատանքներուն, նրատարակութեամբ, ինչպէս հաւաք Հայ Գրողներու Բ. Համագումարի կողմ, որուն պատասխանեցին Սփիւռքէն տասնեակ մը գրողներ ալ:

Ոչիշ երևոյթ մը՝ ներգաղթի եր, որ կ'անցնէր քիչը Հայրենիքի սահմաններուն մէջ ապրող հայրենակիցներուն. այդ շարժումին նպատակն է, կարելի է ըսել, ազգային բոլոր կուսակցութիւնները անխորաբար: Հայրենիք, Հայրենասիրութիւն եղան ներշնչումի աղբիւր Հայաստան գացող և վերադարձող պատուիրակներու գրչին տակ, ընդհանուր խանդավառութիւն մը ի տես հոն կատարութեամբ վերելքին՝ գեղարուեստական, մարտաբանական ձեւերակներուն: Այս ամէնը նշան են կեանքի և միտքեան, և մենք ոչնչաւ ենք որ այդ կեանքը հետագային պիտի բեռնակոխէ դեռ աւելի յարաձուռ և գիտակից զարգացումի մը փուլին մէջ: «Հայրենիքը» սիրոյ առարկան բոլորիս սրտին, և այն վառարանը, ուր հայ ժողովուրդի ամփոփ կորիզ մը, հեռու ձորունի ամէն փոսակէն, կը կերտէ Հայաստանի ապագան. ի սրտէ կը մարդենք որ ստեղծուի նորանոր կարելիութիւններ առաջիկայ շրջանին մէջ աշխարհի առողջ և հաստատուն կապերու ու սերտաւորումի՝ զանազան ամիւրոյ վրայ տակաւին ապրող հայ ստեղծագործող ուժերուն և մայր հողին միջև, նպատակը համար ընդհանուր համերաշխ գործունէութեան:

Հ. Մ. Ճ.